

192. ԷՇԸ, ՁԻՆ ԵՎ ԿՈՎԸ

Մի անգամ էշը, ձին և կովը վիճում են։ Ձին ասում է.—Ես եմ գովական ու պաշտելի, մարդիկ ինձ բեռնում են, հեռու տեղեր են գնում և տիրոջս դժվար տեղերից ազատում եմ, ինձնով շատ-շատերն են ուրախանում ու պարծենում։

Կովն ասում է.—Իմ կաթը խմում են, յուղն ու պանիրը ուտում, միսս ուտում, կաշիս հագնում, ես շատ-շատ մարդկանց եմ կերակրում։

Էշը խոսք չի գտնում ասելու։

Ձին և կովը նախատելով նայում են նրա վրա, վերջը պայման կապում, որ գնան և մի մարդու մոտ գանգատ անեն։

Գնում է ձին, գանգատ անում մի մարդու, այդ մարդը կոպիտ կերպով դուրս է քշում ձիուն։ Գնում է կովը, այս մարդը նույն կարգով դուրս է անում կովին, իսկ երբ գնում է էշը, սա մեծ հարգանքով ընդունում է, ճանապարհում է էշին։

Էշը պարծենալով գալիս է և մեծ-մեծ բրդել սկսում կովի ու ձիու առաջ, ասելով.

—Այն մարդն ինձ ընդունեց մեծ հարգանքով ու պատվասիրությամբ։

—Դե, ասա նա էլ քեզ նման էշ է եղել էլի,—միաբերան պատասխանում են ձին և կովը։